

ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ Արագածոտնի մարզի

«Սարալանջի հիմնական»
դպրոցի

Ռուզաննա Մնացականյան

2023-2028 թթ.

Բովանդակություն

1. Ուսումնական հաստատության գործունեությունը.....	4
1.1 Կրթական կարիքների նկարագրություն՝ պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին, հաստատության ենթակառուցվածքներին համապատասխան համապատասխան:.....	5
2. Իրավիճակի վերլուծություն, հնարավորությունները, ուժեղ և թույլ կողմեր	9
2.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն	9
2.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն:.....	11
2.3 Ուսումնական հաստատության կառավարման մարմնի և տնօրենի.....	12
համագործակցության:	12
2.4 Հաստատության համագործակցությունը ՏԻ մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ:.....	13
2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում, վերլուծություն:.....	15
2.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների վերլուծություն ներկայացում:	17
2.7 Չափորոշչահային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն*:	18
2.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն:.....	19
2.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն:	20
2.10 Ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից	20
2.11 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր:	21
2.12 Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները:	21
2.13 Աշակերտական համակազմը:	23
2.14 Ուսումնական միջավայր.....	24
3. Նպատակների և խնդիրների սահմանում:	24
3.1 Առկա իրավիճակին և հնարավորություններին համապատասխան նպատակների սահմանում:.....	24
3.2 Առկա իրավիճակին և հնարավորություններին համապատասխան խնդիրների սահմանում:.....	26
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն ու միջոցառումները:.....	28
4.1 Ըստ ոլորտների նպատակների և խնդիրների՝ համապատասխան գործողությունների մշակում:	28
4.2 Ըստ ոլորտների նպատակների և խնդիրների՝ համապատասխան մշակված գործողությունների համար ժամանակացույցերի սահմանում:	28

5. Յուրաքանչյուր գործողության իրականացման և ակնկալվող արդյունքների լիարժեք ապահովման համար պահանջվող անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաների բավարար և նպատակային լինելու փաստարկներ, վերլուծություն:.....	45
5.1 Մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսների հավասարաչափ և արդյունավետ օգտագործման փաստարկներ և վերլուծություն զարգացման ծրագրի իրականացման համար:.....	46
Վերջնարդյունքները:	47
6. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման ռիսկերը:	48
7. Նպատակի, խնդիրների, դրանց լուծմանն ուղված յուրաքանչյուր գործողությունից բխող հնարավոր ռիսկերի բացահայտում, գնահատում:.....	48
8. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները: ..	49
9. Յուրաքանչյուր գործողության համար վերահսկողության մեխանիզմների սահմանում:	49
10. Յուրաքանչյուր գործողության համար համապատասխան հաշվետվության ձևերի և դրանց ժամանակացույցերի սահմանում:	49
11. Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման:	50
12 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատման չափանիշների սահմանում:	50
13 Հալածանքի, օտարման և բռնության կանխարգելման գնահատման չափանիշների սահմանում:	51
13 Դպրոցի գործունեությունը ըստ ուղղությունների:	52

1. Ուսումնական հաստատության գործունեությունը

Դպրոցի անվանումն է՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Սարալանջի հիմնական դպրոց» ՊՈԱԿ, Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17.01.2003թ.-ին:

Գրանցում.№49.210.00251 ՀՎՀՀ 05201711

Դպրոցական շենքը կառուցվել է 2003 թվականին, որը տիպային է: Մասնակի վերանորոգվել է 2020թ.-ին: Դպրոցն ըստ ՀՀԿԳՆ 2010թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1727-Ա/Ք հրամանով տրված N0084/տարրական/, N0079/հիմնական/լիցենզիաների իրավունքունի իրականացնելու- տարրական ընդհանուր 1-ին աստիճան՝ 50 սահմանային տեղով, հիմնական ընդհանուր 2-րդ աստիճան՝ 50 սահմանային տեղով մինչև 100 աշակերտ-տեղ հզորությամբ: Շենքը մեկ հարկանի է՝ 456.8մ2 մակերեսով, դպրոցամերձ բակը 0.4208 հա է:

2022-2023 ուսումնական տարվա սկզբին դպրոցը ունեցել է 17 սովորող, կոմպլեկտավորվել է 4 դասարան:

Դպրոցում այսօր առկա է 9 դասասենյակ , 1 գրադարան /հարմարեցված/, 1 ճաշարան, 1 պահոց սենյակ, 1 համակարգչային սենյակ, 1 բազմաֆունկցիոնալ համակարգիչ, 8 դյուրակիր համակարգիչ, որոնցից 4-ը ունեն տեխնիկապես վերազինման կարիք, 1 պրոյեկտոր, 3 սանհանգույց, որոնցից գործում են 3-ը: Դպրոցը ջեռուցվում է էլ. սալիկներով:



Դպրոցն ունի 15 հոգուց բաղկացած անձնակազմ: Դպրոցում աշխատում են 10 ուսուցիչ, որոնցից 9-ը կանայք են: Բարձրագույն կրթությամբ՝ 8, միջնակարգ մասնագիտական՝ 2: 4 ուսուցիչ աշխատում են համատեղությամբ:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը 1/2 է: Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը մոտավորապես 15,6 ժամ է: Սարալանջի հիմնական դպրոցը գործում է միաժամանակ՝ հնգօրյա աշխատաժամանակով:

1.1 Կրթական կարիքների նկարագրություն՝ պետության կրթական քաղաքականության միտումներին, համայնքի շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին, հաստատության ենթակառուցվածքներին համապատասխան համապատասխան:

1. **Կրթության զարգացման գլխավոր նպատակն է** ապագային միտված կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը.
 1. լիարժեք ծառայում է ազգային շահերին,
 2. արտահայտում է կրթության համապատասխանությունը տնտեսության և հասարակության զարգացման ապագա ակնկալիքներին,

3. յուրաքանչյուր քաղաքացու հնարավորություն է տալիս կյանքի բոլոր փուլերում ստանալ իր պահանջմունքներին համապատասխան որակյալ կրթություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

2. Կրթության զարգացման գլխավոր նպատակի իրականացման համար կորդեգրվեն հետևյալ ռազմավարական մոտեցումները.
1. **կարիքներից բխող պլանավորում** – կբազմազանեցվեն ուսումնական ծրագրերը, կրթության կազմակերպման ձևերն ու մեթոդները, կրթությունն ստանալու հնարավոր ճանապարհները,
2. **սոցիալական երկխոսություն** - կարիքներին արդյունավետ արձագանքելու նպատակով կամրապնդվեն հետադարձ կապի և սոցիալական երկխոսության մեխանիզմները. պարբերաբար կանցկացվեն հասարակական կարծիքի ուսումնասիրություններ, կստեղծվեն հանրային քննարկման հարթակներ, կբարելավվեն որոշումների կայացման մասնակցային մեխանիզմները,
3. **գործընկերային համագործակցություն** - կամրապնդվի գործընկերային համագործակցությունը մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ: Որոշ գործառույթների իրականացումը, կրթաօժանդակ ծառայությունների մատուցումը կփոխանցվի մասնագիտական ոլորտում արհեստավարժ և հասարակության վստահությունը վայելող կազմակերպությունների: Պետական աջակցություն կցուցաբերվի կրթության զարգացման գերակայություններին և սկզբունքներին համապատասխանող՝ միջազգային և տեղական կազմակերպությունների նախաձեռնությամբ իրականացվող ծրագրերին, որոնք մասնագիտական փորձաքննության արդյունքներով կներառվեն կրթության զարգացման ծրագրերի փաթեթում:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3. Կրթության զարգացման պետական քաղաքականության սկզբունքներն են.
1. կրթական հաստատությունների ինքնավարության և ինքնաարժեքվորման համակարգի կիրառում,
2. **ներառականություն**՝ կրթության բնագավառի պետական քաղաքականության մշակումն ու իրականացումը պետք է ընդգրկի հասարակության բոլոր խավերը՝ ներառյալ խոցելի խմբերը:
3. **տարածքային համաչափ զարգացում**՝ տարածքային համաչափ զարգացումը կայուն զարգացման կարևոր նախադրյալն է: Կրթության համակարգում հավասարության ապահովումը և տարածքային անհամաչափ զարգացման մեղմումը կրթության միջոցով պետք է լինեն իրականացվող քաղաքականության անկյունաքարային սկզբունքները,

4. **ազգային և համամարդկային արժեքների համադրում**՝ Հայաստանի կրթական համակարգը միջազգային կրթական համակարգի անբաժանելի մաս լինելով, ակտիվորեն ներգրավված է եվրոպական և տարածաշրջանային կրթական ինտեգրացիոն ծրագրերում, և նպատակաուղղված է հայ քաղաքակրթական ժառանգության վրա հիմնված արժեհամակարգի ամրապնդմանը,
5. **թափանցիկություն և հաշվետվողականություն**՝ առաջընթացի կարևոր նախապայման է բոլոր շահագրգիռ կողմերի արդյունավետ համագործակցությունը, ինչը կարող է ապահովվել միայն առավել թափանցիկ միջավայրում և բաց հաշվետվողականության պայմաններում:

Հաստատության ենթակառուցվածքները

Դպրոցում այսօր առկա է 9 դասասենյակ , 1 գրադարան/հարմարեցված, 1 ճաշարան, 1պահոց սենյակ, 1 համակարգչային սենյակ, 1 բազմաֆունկցիոնալ համակարգիչ, 8 դյուրակիր համակարգիչ, որոնցից 4-ը ունեն տեխնիկապես վերազինման կարիք, 1 պրոյեկտոր , 3 սանհանգույց, որոնցից գործում են 3-ը: Դպրոցը ջեռուցվում էլ.սալիկներով: Ապահովված է ինտերնետ կապով:

Մարդկային ռեսուրսներ

Դպրոցն ունի 15 հոգուց բաղկացած անձնակազմ՝ 10 ուսուցիչ, 5 ուսումնաօժանդակ: Ուսուցիչներից 7-ը անցել են պարտադիր ատեստավորում, 8-ը ունեն բարձրագույն կրթություն, միջնակարգ մասնագիտական՝ 2: 4 ուսուցիչ աշխատում են համատեղությանը, 3 ուսուցիչ պատրաստվում է մասնակցել կամավոր ատեստացիայի: Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով:

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Տնօրեն	1
ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Ուսուցիչների ընդհանուր թիվը	10
Սովորողների թիվը	18
Բարձրագույն կրթության ուսուցիչներ	8

Համատեղությամբ բաշխ. ուսուցիչներ	4
Ուսուցիչ/սովորող փոխհարաբերությունը	1/2
Ուսուցիչների միջի շաբաթ. ծանրաբեռնվածությունը	15,6 ժամ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՍՏԻՔՆԵՐ	
Օպերատոր	0,5
Գրադարանավար	0,5
ՈՒՍՈՒՄՆԱԾԺԱՆԴԱԿ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Հավաքարար	1
Պահակ	2
Դռնապան	0,5
Հաշվապահ	0,5

Կառավարման և խորհրդակցական մարմիններ

Դպրոցում գործում են կառավարման (միացյալ) խորհուրդ, մանկավարժական խորհուրդ, ծնողական և աշակերտական խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր կանոնադրությունը, աշխատանքային պլանը, գործում է օրենքով և դպրոցի կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Մանկավարժական խորհուրդ (բոլոր մանկավարժական աշխատողները)

Ծնողական խորհուրդ (1 - 9- րդ դասարանների ծնողական խորհրդի նախագահները)

Աշակերտական խորհուրդ (6-9-րդ դասարանների սովորողները)

Հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, իսկ հիմքը դպրոցի զարգացման ծրագիրն է, որի գլխավոր նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Դպրոցի զարգացման ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որը նախասահմանում է 2023-2028 թվականների դպրոցի

զարգացման հիմնական ուղղությունները՝ արդի պետական կրթական քաղաքականության պահանջներին համապատասխան, հաշվի է առնված կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը և Սարալանջ համայնքի կարիքները: Ծրագիրը կազմվում է 5 տարվա համար և ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝

- 1) հաստատության գործունեությունը.
- 2) իրավիճակի վերլուծությունը. ուժեղ և թույլ կողմերը.
- 3) նպատակների և խնդիրների սահմանումը.
- 4) սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը.
- 5) պատասխանատուները.
- 6) արդյունքների գնահատման չափանիշները.
- 7) ռիսկերը.
- 8) գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները.

Դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարվել է առկա իրավիճակի վերլուծություն, բացահայտվել են դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վեր են հանվել առկա հիմնախնդիրները: Հանդիպումներ են ունեցել դպրոցի ծնողական, մանկավարժական, աշակերտական խորհուրդների հետ, որոնց դիտարկումները, առաջարկությունները, կարծիքները հնարավորինս արտացոլել են դպրոցի զարգացման ծրագրում:

2. Իրավիճակի վերլուծություն, հնարավորությունները, ուժեղ և թույլ կողմեր

2.1 Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծություն

Դպրոցի անվանումն է՝ ՀՀ Արագածոտնի մարզի «Սարալանջի հիմնական դպրոց» ՊՈԱԿ, դպրոցի կանոնադրությունը հաստատվել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 17.01.2003թ.-ին:

Գրանցում. №49.210.0025

ՀՎՀՀ 05201711

Դպրոցական շենքը կառուցվել է 2003 թվականին, որը տիպային է: Մասնակի վերանորոգվել է 2020թ.-ին: Դպրոցն ըստ ՀՀԿԳՆ 2010թ. դեկտեմբերի 22-ի թիվ 1727-Ա/Ք հրամանով տրված N0084/տարրական/, N0079/հիմնական/լիցենզիաների իրավունքունի իրականացնելու- տարրական ընդհանուր 1-ին աստիճան՝ 50 սահմանային տեղով, հիմնական ընդհանուր 2-րդ աստիճան՝ 50 սահմանային տեղով մինչև 100 աշակերտ-տեղ հզորությամբ: Շենքը մեկ հարկանի

Է՝456.8մ2 մակերեսով, դպրոցամերձ բակը 0.4208 հա է: Դպրոցում այսօր առկա է 9 դասասենյակ, որից 2-ը ունեն ամբողջական վերանորոգման կարիք, 1 գրադարան,որն ապահովված է դասագրքերով,մեթոդական գրականությամբ,1 ճաշարան,որը բարեկարգվել և մասնակի կահավորվել է ծնողների աջակցությամբ, 1պահոց սենյակ, 3 սանհանգույց, որոնցից գործում են 3-ը:

Դպրոցում 2018թվականին մեկնարկել է ՄԱԿ-ի ԴՀԾ կողմից կազմակերպված «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը, որը հնարավորություն է տալիս դպրոցի տարրական դասարանի աշակերտներին ապահովել սնունդով (չոր) պեքայությունների ֆինանսավորմամբ:2020թվականին դպրոցի տնտեսված գումարի միջոցներով և մազպետարանի աջակցությամբ կատարվել են մի շարք աշխատանքներ, մասնավորապես փոխվել են դասարանների դռները(եվրո), պատուհանները(եվրո), հատակը(լամինատ), մուտքի դուռը(եվրո), կատարվել է էլեկտրական գծերի արդիականացում, ջրահեռացման խողովակների տեղադրում:

Հարկայնություն	1
Նախատեսված աշակերտական տեղերի քանակը (Լրացվում է ԿՏԱԿ-ի կողմից)	100
Փաստացի հաճախող երեխաների թիվը	18
Տվյալ շենքում դպրոցի տեղակայման տարեթիվը	2003
Շենքի ընդհանուր մակերեսը, մ2	650.00
Շենքի ներսի մաքրվող մակերեսը, մ2	457.00
Դպրոցը համայնքի տարածքում միակն է (Լրացվում է ԿՏԱԿ-ի կողմից)	այո
Հեռավորությունը ամենամոտ դպրոցից (մոտակա բանուկ ճանապարհով, կմ-ով)	5.00
Նկուղային հարկի ընդհանուր մակերեսը, մ2	0.00
Դպրոցին կից տարածքի մակերեսը, մ2	4100
Վարձակալության տրված տարածք, մ2	0.00

Վարձակալությամբ վերցված տարածք, մ2	0.00
Բնակեցված սենյակների քանակը	13
Դրանց ընդհանուր մակերեսը	250.00

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Տիպային, մեկ հարկանի բարե ամուր շենք	Դպրոցի շենքն ունի մասնակի վերանորոգման կարիք
Տանիքը բարեկարգ է	Աշխատանոցի բացակայություն
Առկա է սանհանգույցներ և մշտական ջրամատակարարում	Մարզահրապարակի ոչ բարեկարգ վիճակը
Կանաչապատ ընդհանուր տարածք/0,4հա	Մարզադահլիճի բացակայություն
	Թեքահարթակների բացակայություն և սանհանգույցների անհամապատասխանություն ԿԱՊԿ ունեցող սովորողների համար
	Կոյուղագծերի ոչ բարվոք վիճակ

2.2 Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի վերլուծություն:

25 աշակերտական սեղան, 50 աշակերտական աթոռ, 5 համակարգչային սեղան, 5 շախմատի սեղան, 10 շախմատի աթոռ, 5 գրապահարան, 6 գրատախտակ, 7 էլեկտրական սալիկ, 1 համակարգչային սենյակ, 1 բազմաֆունկցիոնալ համակարգիչ, 8 դյուրակիր համակարգիչ, որոնցից 4-ը ունեն տեխնիկապես վերազինման կարիք, 1 նոթբուք, 1 պրոյեկտոր, 1 չիրկիզվող պահարան: Դպրոցը ջեռուցվում էլ.սալիկներով: Ճաշարանում առկա է ջրատաքացուցիչ, սառնարան, գազօջախ, վացարան և խոհանոցային իրերի դարակներ, Գրադարանային ֆոնդ՝ քարտեզ 20, գրականություն 350, մեթոդական գրականություն 60:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
--------------	--------------

Առկա են համակարգիչներ, բավարարվիճակում	Համակարգիչների 50%-ը ֆիզիկապես մաշված են
Ապահովված է որոշակի գույքով, ինտերնետ կապով	Գրադարանում բացակայում են էլեկտրոնային ձեռնարկները
Գրադարանն ապահովված է դասագրքերով, ծրագրային գրականությամբ	Պակասում է մասնագիտական գրականությունը
	Առկա գույքի գրեթե 50 տոկոսը մաշված է
	Բացակայում է մարզագույք

2.3 Ուսումնական հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության:

Սարալանջի հիմնական դպրոցը ունի կոլեգիալ կառավարման (միացյալ՝ Սարալանջ, Լուսագյուղ, Նիգավան) խորհուրդը, որը ձևավորվել է օրենքով սահմանված կարգով:


Տնօրենի և կառավարման խորհրդի համագործակցությունը անընդհատ է, ունի շարունակական բնույթ, որը նպաստում է դպրոցի համակողմանի զարգացմանը: Դպրոցի խորհուրդը՝


1. ՀՀ կառավարության սահմանած կարգով ընտրում է տնօրեն
2. տնօրենի գործունեության նկատմամբ իրականացնում է ընթացիկ վերահսկողություն
3. հաստատում է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների, սովորողների վարքագծի կանոնները
4. տնօրենի ներկայացմամբ՝ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացյուն ցուցակները, տալիս է հավանություն և ներկայացնում համապատասխան լիզորված մարմին
5. քննարկում է ներքին և արտաքին գնահատման արդյունքները
6. լսում է գույքի օտարման և (կամ) ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների վերաբերյալ տնօրենի ներկայացրած առաջարկությունները և տալիս հավանություն
7. վերահսկում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը:

Կառավարման նոր համակարգի փոփոխությունները՝
<https://www.irtek.am/views/act.aspx?aid=150065>

2.4 Հաստատության համագործակցությունը ՏԻ մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ:

Կրթության որակի և սովորողների առաջադիմությունը խրախուսելու նպատակով հաստատությունն ապահովվում է արդյունավետ հաղորդակցություն ուսումնական գործընթացի շահակիցների հետ և ներգրավվում է համայնքին: Առկա է արդյունավետ համագործակցություն և կապ ոլորտի մարմինների, ուսուցչական կազմակերպությունների և արհեստագործական միությունների, այլ շահագրգիռ կողմերի հետ:





ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Առկա է համագործակության որոշակի շրջանակ	Մեծացնել համագործակցության շրջանակը
ՏԻ մարմինները հաճախակի աջակցում են դպրոցին:	

2.5 Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացում, վերլուծություն:

Դպրոցում աշխատում են 10 ուսուցիչ, որոնցից 7-ը անցել են պարտադիր ատեստավորում, բարձրագույն կրթությամբ՝ 8, միջնակարգ մասնագիտական՝ 2: 4 ուսուցիչ աշխատում են համատեղությամբ, 3 ուսուցիչ պատրաստվում է մասնակցել կամավոր ատեստացիայի :

Մանկավարժական համակազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով: Դպրոցում առկա են երկարամյա փորձ և վաստակ ունեցող ուսուցիչներ: Երիտասարդ ուսուցիչները տիրապետում են համակարգչային և դասավանդման ժամանակակից մեթոդներին և սեփական նախաձեռնությամբ ՏՀՏ գործիքներ են կիրառում դասապրոցեսում, որն էլ ավելի հետաքրքիր և գրավիչ է դարձնում դասը: Դպրոցը հազեցած է ուսումնամեթոդական գրականությամբ և ծրագրերով : Ուսուցիչները տիրապետում են բարեվարքության կանոններին: Դպրոցում տիրում է բարձր բարոյահոգեբանական մթնոլորտ: Երկարամյա փորձ ունեցող և երիտասարդ ուսուցիչների համագործակցության արդյունքում՝ համատեղելով դասավանդման հին ու նոր մեթոդները, բերում է արդյունավետ ուսուցման: Մանկավարժական համակազմը տիրապետում է ԿԱՊԿ ունեցող աշակերտների հետ աշխատելու կարողություններին և հմտություններին և առաջնորդվում են ԱՌԻՊ-ներով: Դպրոցում առկա են ուսուցիչներ՝ նվիրյալ մանկավարժներ, որոնք անկախ ֆինանսավորումից, կատարում են հավելյալ աշխատանքներ, դասերից հետո օգնում են ետ մնացող աշակերտներին:

Դպրոցում գործում են տարրական և հիմնական մեթոդական միավորումներ: Քանի որ բացակայում են որոշ հաստիքներ, որոնք ի պաշտոնե պետք է վերահսկեին ինչպես օրինակ՝ մեթոդական միավորի, դասղեկների աշխատանքները՝ կատարվում են որոշակի թերացումներով: Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը 1/2 է:

Ուսուցիչների միջին շաբաթական ծանրաբեռնվածությունը մոտավորապես 15,6 ժամ է:

ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔՆԵՐԻ ԹԻՎԸ
ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ	
Ուսուցիչների ընդհանուր թիվը	10
Սովորողների թիվը	18
Բարձրագույն կրթությամբ ուսուցիչներ	8

Համատեղությամբ բաշխ. ուսուցիչներ	4
Ուսուցիչ/սովորող փոխհարաբերությունը	1/2
Ուսուցիչների միջի շաբաթ. ծանրաբեռնվածությունը	15,6 ժամ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՍՏԻՔՆԵՐ	
Օպերատոր	0,5
Գրադարանավար	0,5

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱԶՄԸ

ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ	ԹԻՎԸ	ՏՈԿՈՍԸ
Մինչև 30 տարեկան	1	10%
31-40 տարեկան	1	10%
41-50 տարեկան	2	20%
51-55 տարեկան	1	10%
56 և ավելի տարեկան	5	50%

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Մասնագիտական բարձր կարողություններ, թիմային աշխատանք	Տարակարգ ունեցող ուսուցիչների բացակայություն
Կոլեկտիվում առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի առկայություն	Որոշ մանկավարժներ պասիվ են նորամուծությունների նկատմամբ

Երիտասարդ կադրերը տիրապետում են համակարգչային և ժամանակակից մեթոդներին	Մեթոդական միավորման աշխատանքներ
Անցել են վերապատրաստումներ և ունեն բարձր պատասխանատվություն և հեղինակություն	Թույլ դասղեկի՝ դաստիարակչական աշխատանքների մեթոդիկան
Ապահովված են ծրագրերով և ուսումնամեթոդական գրականությամբ	Համակազմ դասարանների դասավանդման մեթոդիկայի հմտությունների պակաս
Բարեվարքության կանոնների տիրապետում Երկարամյա փորձ	Կամավոր ատեստավորում անցած ուսուցիչների բացակայություն
Բազմակարծիք, համագործակցային, մասնակցային աշխատանք	Երկկոմպլեկտ դասարաններում նոր առարկայական ՀՊԶ-ով աշխատանքների կազմակերպման թույլ պատկերացումներ
Նախաձեռնող մանկավարժների առկայություն	
Բազմաբնույթ միջոցառումների, նպատակային Էքսկուրսիաների կազմակերպում	

2.6 Օգտագործվող ՏՀՏ և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների վերլուծություն ներկայացում:

Դպրոցն ունի համակարգչային դասասենյակ, որը կիրառվում է ինֆորմատիկայի դասաժամերը իրականացնելու ինչպես նաև տարբեր ինտեգրված համակարգչային դասեր անցկացնելու համար: Ինտերնետ կապը հնարավորություն է տալիս թե ուսուցիչներին, և թե աշակերտներին օգտվելու տարբեր էլեկտրոնային կրթական հարթակներից: Սովորողները շրջված դասարան մեթոդով տեսադասերի միջոցով ծանոթանում են նոր նյութին, դիտում են փորձեր, գործնական աշխատանքներ, որն էլ ավելի արդյունավետ և հետաքրքիր է դարձնում ուսումնառությունը: Կատարվում են համագործակցային աշխատանքներ՝ սովորող-սովորող, սովորող-ուսուցիչ, որի նպատակը սովորողների մոտ քննադատական, ստեղծագործական մտածողություն, փոխօգնության շնորհիվ միասնական նպատակին հասնելու կարողության զարգացում, կարողանում են անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսուցիչների 50 տոկոսը տիրապետում է ՏՀՏ-ներին	Առկա են ՏՀՏ-ները դժվարությամբ օգտագործող մանկավարժներ
Մանկավարժները մասնակիորեն տիրապետում են կրթական հարթակներին	Որոշ մանկավարժներ պասիվ են նորամուծությունների նկատմամբ

2.7 Չափորոշչահային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն*:

Հանրակրթության պետական չափորոշիչը կարողունակահեն է և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներ, ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը: Հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերի սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները նկարագրում են, թե հանրակրթական հիմնական ծրագրերի կրթական աստիճանների ավարտին սովորողը ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա: Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը:

Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:

Չափորոշիչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար:

Կարողունակությունները սովորողի կողմից ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա ըստ իրավիճակի արդյունավետ ու պատշաճ արձագանքելու ձևերն են:

Կարողունակությունները ձևավորվում են սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով և բխում են հանրակրթության հիմնական նպատակներից:

Դպրոցում իրականացվում է ՀՊՉ առանցքային կարողունակություններին միտված ուսումնական գործընթաց: Առարկաների դասավանդման ժամանակ կարևորություն է տրվում առարկայի

շրջանակներում սովորողների մոտ դիրքորոշման և արժեքների ձևավորմանը: Յուրաքանչյուր դասը պլանավորում է ուսուցիչների կողմից, թե տարեսկզբում՝ թե դասընթացից առաջ: Ըստ կրթական աստիճանների ստուգվում է սովորողների գիտելիքները՝ նրանց համապատասխանությունը ՀՊՀ կրթական աստիճաններին՝ կարևորելով վերջնարդյունքները:

Դպրոցում ուսումնական գործունեությունը ծավալվում է հաշվի առնելով հենքային ուսումնական պլանը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Քիչ են առարկայական չափորոշիչների նվազագույնը չուրացնող սովորողների քանակը:	Դպրոցի որակը 80 տոկոսից ցածր է:

2.8 Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն:

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով գործում են կառավարման, խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Բոլոր մարմինների անդամները գիտեն իրենց աշխատանքային գործառույթներից բխող լիազորությունները (իրավունքները և պարտականությունները), սակայն այնուամենայնիվ նրանց մասնակցայնությունը ուսումնական հաստատության ոչ բոլոր գործընթացներում է արտացոլված: Առանձին դեպքերում չկա շահառուների համակարգված համագործակցությունը աշխատանքների պլանավորման, իրականացման և հաշվետվողականության մեջ: Առկա են ներդպրոցական վերահսկողության, ուսումնադաստիարակչական աշխատանքների գնահատման ինչպես նաև կառավարման և հաշվետվողականության գործընթացներում ընդգրկվելու ոչ բավարար շահագրգռվածությունը: Բազմակարծության միջավայրում հաճախ անտեսվում է բարեվարքության կանոնների պահպանման իրական ընկալումները: Կրթության որակի և սովորողների առաջադիմությունը խրախուսելու նպատակով հաստատությունն ապահովվում է արդյունավետ հաղորդակցություն ուսումնական գործընթացի շահակիցների հետ և ներգրավվում է համայնքին:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ձևավորված է բազմակարծիք միջավայր:	Կարծիքներ արտահայտելուց խուսափող մանկավարժների առկայություն

2.9 Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն:

Դպրոցում առկա է միջավայր, որտեղ ուսուցիչները կարող են զբաղվել ինքնակրթությամբ՝ օգտվելով տարբեր կրթական հարթակներից: Տնօրենը արժևորում է նվիրյալ աշխատանքը, խրախուսում և խթանում է աշխատողների ստեղծագործական նախաձեռնությունը: Ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունները ներկայացնելիս ակտիվ ուսուցիչները, ծնողները, աշակերտները արժանանում են պատվոգրերի, շնորհակալագրերի: Մանկավարժական աշխատողները խրախուսվում են մասնագիտական զարգացման տարաբնույթ ծրագրերի մասնակցության համար, հաստատությունում ամեն տարի մասնագիտական զարգացման ծրագրերին մասնակցող և դրա արդյունքում վարձատրության բարձրացում գրանցող աշխատակիցների թիվն ամեն տարի աճում է:

2.10 Ուսումնական նպատակներով կատարված ծախսերի վերլուծությունը՝ դրանց արդյունավետության, ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Դպրոցի ֆինանսավորումը պետքույզեից կատարվում է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, իսկ 2023 թվականի սեպտեմբերից դասարան թվով: Իրատեսորեն գնահատելով դպրոցի հնարավորությունները՝ ընթացիկ ծախսերը իրականացվելու են օրենսդրությամբ սահմանված կարգով, առաջնորդվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով: Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը հստակ է և թափանցիկ: Հաստիքացուցակը, նախահաշիվն ու ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրված են դպրոցի կայքում: Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են 2022 – 2023թթ:

- Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ /21,980,200/
- Ջեռուցման ծախսեր /767,3/
- Կոմունալ վճարներ /49,7/
- Գրասենյակային և տնտեսական ապրանքներ /280,0/

- Գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր-
- Մասնագիտական ծառայություններ /48,0/
- Կապիտալ ծախսեր-
- Կենցաղային և հանրային սննդի ծախսեր /125,4/
- Պարտադիր ծախսեր-
- Տրասպորտ/33,4/
- Այլ ծախսեր

Դպրոցի կարիքները հոգալու համար անհրաժեշտ է ներգրավել լրացուցիչ ֆինանսական միջոցներ՝ բարեգործական աջակցություն, արտաբյուջեի ձևավորում, հովանավորներ, բարերարներ, շրջանավարտների խորհուրդ:

2.11 Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգվում է հետևյալ իրավական ակտերով՝ «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով, «ՀՀ աշխատանքային օրենսգրքով», դպրոցի կանոնադրությամբ, օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով, ներքին իրավական ակտերով, նորմատիվ փաստաթղթերով: Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն): Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով: Դպրոցի գործունեության փաստաթղթերի թղթային ձևաչափից աստիճանաբար անցում է կատարվում էլեկտրոնայինի: Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու, ՈԻԹՀՎ վերլուծության նպատակով:

2.12 Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները:

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով գործում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական խորհուրդներ: Երեք

ամիսը մեկ արվում են նիստեր, անհրաժեշտության դեպքում արտահերթ նիստեր, որտեղ քննարկվում են ուսումնադասիարակչական գործունեության հաշվետվությունները, ներքին և արտաքին գնահատման արդյունքները և այլ գործառնություններ օրենքով սահմանված կարգով, որոնք նպաստում են դպրոցի զարգացմանը: Տնօրենի հետ համագործակցության արդյունքում կառավարման խորհուրդը լիազոր մարմին է ներկայացրել առաջարկություններ՝ դպրոցում որոշակի շինարարական աշխատանքներ կատարելու մասին, որն էլ ընդունվել է լիազոր մարմնի կողմից: Կատարվել է մասնակի վերանորոգում(փոխվել են դռները, պատուհանները, հատակը, արդիականացվել է էլեկտրականությունը): Համայնքապետարանը համագործակցում և աջակցում է դպրոցին, իրականացնում է տարբեր ծրագրեր, ներգրավելով աշակերտներին տարբեր բնույթի միջոցառումներում: Դպրոցի համակարգված և արդյունավետ աշխատանքի մեջ ակնառու է մանկավարժական,ծնողական,աշակերտական ինչպես նաև կառավարման խորհուրդների աշխատանքները: Կարևոր հարցերը քննարկվում են մանկավարժական,ծնողական, աշակերտական խորհուրդներում և որոշումները կայացվում են հաշվի առնելով բոլորի կարծիքները և ձայները: :Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններում քննարկվում են հանրակրթության ոլորտին վերաբերող օրենսդրական առաջարկներն ու նախագծերը, առկայության դեպքում ներկայացվում են առաջարկներ և դիտարկումներ դրանց վերաբերյալ՝ ոլորտի կառավարման համապատասխան մարմիններին.


հաստատության զարգացման նպատակով հաշվի է առնվում համայնքի կարիքներն ու ներուժը, առաջարկվում են նոր ծրագրեր և մոտեցումներ.

5) առկա է արդյունավետ համագործակցություն և կապ ոլորտի մարմինների, ուսուցչական կազմակերպությունների և արհեստագործական միությունների, այլ շահագրգիռ կողմերի հետ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսումնական գործունեության թափանցիկություն:	Նախաձեռնության պակաս, որը պայմանավորված է ծնողների պասիվությամբ:
Կառավարման խորհրդի կապը ծնողական խորհրդի և աշակերտական խորհրդի հետ ըստ իրենց գործառնությունների:	Հոգեբարձուների խորհրդի բացակայություն
Ծնողական խորհրդի և աշակերտական խորհրդի ակտիվ ներգրավվածությունը արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներում:	Շրջանավարտների խորհրդի բացակայություն

2.13 Աշակերտական համակազմը:

Սարալանջի հիմնական դպրոցում սովորում են 18 աշակերտ՝ 5 աղջիկ, 13 տղա: Բոլոր աշակերտները սիրով հաճախում են դպրոց, նախաձեռնող են և համախմբված նպատակի շուրջ: Սակավաթվության հանգամանքը բերում է միմյանց նկատմամբ փոխադարձ հարգանքի և վստահության: Ակտիվորեն մասնակցում են դպրոցում կատարվող բոլոր միջոցառումներին: Մասնակցել են մաթեմատիկա և ՀԵՊ առարկաների դպրոցական, մարզային օլիմպիադաներին և գրանցել են բավականին բարձր արդյունքներ: Վերջին տարիներին նկատվում է կենդուրու, մեղու մրցաշարերի մասնակցության պասիվություն: Ուսումնական տարվա սկզբին աշակերտական համակազմից ըստ կարգի ձևավորվում է աշակերտական խորհուրդ: Աշակերտական խորհրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, ակտիվորեն մասնակցում է կառավարման և մանկավարժական խորհրդի այն նիստերին, որտեղ քննարկվում են աշակերտներին վերաբերվող հարցեր: Սակավաթիվ աշակերտների հանգամանքով դպրոցում ձևավորվում են երկկոմպլեկտ դասարաններ, որն էլ իր հերթին ունի իր դրական և բացասական կողմերը: Բավարար չափով իրագեկված են իրենց իրավունքների և պարտականությունների մասին և պարտաճանաչ կատարում են դպրոցի ներքին կարգապահական կանոնները:



ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բոլոր աշակերտները ապահովված են դասագրքերով	Գրքի և ընթերցանության նկատմամբ հետաքրքրության պակաս
Նախաձեռնող են և համախմբված նպատակի շուրջ	ՏՀՏ-ների ոչ բավարար իմացություն
Ազնվորեն կատարում են իրենց պարտականությունները	Պակասել է մասնակցությունը կենդուրու, մեղու մրցաշարերին
Ակտիվորեն մասնակցում են տարբեր տիպի միջոցառումներին	

--	--

2.14 Ուսումնական միջավայր

Կրթության ոչ պակաս կարևոր բաղադրիչներից է ուսումնական միջավայրը, որը նպաստում է կրթության որակի բարձրացմանը: Հրապուրիչ, գրավիչ հետաքրքիր ուսումնական միջավայրը սովորողներին մոտիվացնում է ուսումնառությանը: Դպրոցական միջավայր. հաստատությունում ապահովված է մանկավարժական ինքնավարության, ակադեմիական ազատության, դրական և ապահով մթնոլորտ բոլոր շահակիցների համար:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսումնական կայուն և նվազագույն անհրաժեշտ գործունեություն ծավալելու համար միջավայրը բավարար է	Ուսումնական միջավայրը մոտիվացնող չէ

3. Նպատակների և խնդիրների սահմանում:

3.1 .Առկա իրավիճակին և հնարավորություններին համապատասխան նպատակների սահմանում:

ՈԼՈՐՏ	ՆՊԱՏԱԿ
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	Բարելավել պայմանները, հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելու կրթության որակի բարելավմանը
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	Ֆինանսական միջոցների աճ
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	Խորհրդակցական մարմինների ընդլայնում, նրանց միջև համագործակցությունը և դպրոց-համայնք կապը խթանելու նպատակով

Մանկավարժական համակազմը	Համակազմի շարունակական համալրում փորձառու կադրերով, մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում՝ նպաստելու ուսուցման որակի բարելավմանը
Համագործակցությունը համայնքի , կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Կոմպետենտ (կարողունակ) և սոցիումին ինտեգրված քաղաքացիների ձևավորում
Աշակերտական համակազմ	Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում
Ուսումնական միջավայր	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացման միջոցով նպաստել ուսման որակի բարելավմանը
Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	Կրթության որակի բարելավում, չափորոշով սահմանված վերջնարդյունքների ապահովում, աշխատանք օջտված երեխաների հետ
Տեխնոլոգիաներ և նորարարություն	Կրթության որակի բարելավում, դասավանդման մոտեցումների արդիականացում, հեռավար ուսուցման գործիքակազմի և ռեսուրսների արդիականացում:
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	Դպրոցի աշխատակիցների ներքին կարգապահական կանոնների բարելավության բաժնի մշակման գործընթացի բարելավում և մասնակցայնության շրջանակի մեծացում
Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր	Ընդլայնել բոլոր շահառու կողմերի մասնակցությունը և բազմակարծությունը՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման, իրականացման, վերահսկողության, գնահատման ինչպես նաև կառավարման և հաշվետվողականության գործընթացներ:

3.2 Առկա իրավիճակին և հնարավորություններին համապատասխան խնդիրների սահմանում:

ՈԼՈՐՏ	ԽՆԴԻՐ
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում, նյութատեխնիկական բազայի համալրում նոր , ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը	Արտաբյուջետային միջոցների ստեղծում
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	Շրջանավարտների խորհրդի ստեղծում
	Կառավարման և խորհրդակցական մարմինների միջև սերտ համագործակցության ամրապնդում
Մանկավարժական համակազմ	Մանկավարժական համակազմի համալրում հմուտ և փորձառու կադրերով Մասնագիտական և դասավանդման որակների արդիականացում և բարելավում
Աշակերտական համակազմ	Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում
Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ	Սովորողների՝ հասարակական կյանքին ինտեգրվելու, հասարակական ակտիվություն դրսևորելու հմտությունների զարգացում
	Համագործակցությունների շրջանակի ընդլայնում
	Սոցիալմշակութային դպրոցի կայացում
Ուսումնական միջավայր	Սովորողների մոտիվացիան ապահովող, ուսումնառությունը խթանող, ժամանցն ու արտադպրոցական կրթությունն ապահովող միջավայրի շարունակական զարգացում:
	Բարձրորակ կրթության, առարկայական

Կրթության որակն ըստ սովորողների ուսումնառության արդյունքների	օլիմպիադաներում բարձր ցուցանիշների ապահովում
	Սովորողների մասնագիտական կողմնորոշմանը միտված միջոցառումների ընդլայնում
	Օտար լեզուների խորացում, ցանկի ընդլայնում
Տեխնոլոգիաներ և նորարարություն	Նորագույն տեխնոլոգիաների և մեթոդների շարունակական ներդնում դասապրոցեսում, ուսուցիչների մասնագիտական որակների շարունակական բարելավում և արդիականացում Մեդիագրագիտության կարևորում ու զարգացում
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր	Ապահովել օրինակելի իրավական ակտերում փոփոխություններ անելիս, նախագծերը քննարկման ներկայացնելիս ուսուցիչների ակտիվ մասնակցությունը
	Համալրել ՆԴՎ իրականացման էլեկտրոնային գործիքակազմը՝ որպես ներքին իրավական ակտերի
Բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր	Հստակեցնել կրթության գործընթացում ներգրաված բոլոր շահառուների մասնակցային, բազմակարծիք միջավայրի վերաբերյալ իրազեկության մակարդակը: Մեծացնել խորհրդակցական մարմինների հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմները: Արդիականացնել ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանավորման մասնակցայնության և բազմակարծության հնարավորությունները: Ներդնել տարբերակված վերահսկողության մեխանիզմներ: Ապահովել մասնակցային բազմակարծիք գնահատման արդյունավետ համակարգ:

4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողություններն ու միջոցառումները:

4.1 Ըստ ոլորտների նպատակների և խնդիրների՝ համապատասխան գործողությունների մշակում:

4.2 Ըստ ոլորտների նպատակների և խնդիրների՝ համապատասխան մշակված գործողությունների համար ժամանակացույցերի սահմանում:

ՈԼՈՐՏ		
Դպրոցի շենքային պայմանները		
ՆՊԱՏԱԿ 1	ԽՆԴԻՐՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Դպրոցում բարելավել շենքային պայմանները	Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական /ֆիզիկական/ միջավայրի հարստացում	2026-2028
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Նիստերի դահլիճի կոսմետիկ վերանորոգում		
2 դասասենյակների ամբողջական վերանորոգում		
Սանհանգույցների վերանորոգում		
Գրադարանին և ընթերցասրահին կից ստեղծել համակարգիչներով կահավորված լսարան, որտեղ տեղադրված համակարգիչներից դասերից հետո կօգտվեն բոլոր ուսուցիչներն ու աշակերտները, որոնք տանը չունեն համակարգչով աշխատելու հնարավորություն:		
Ստեղծել դպրոցի պատմության թանգարան		
Ստեղծել աշակերտական խորհրդի սենյակ		
Մարզահրապարակի բարեկարգում		
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ		
Տնօրեն, հաշվապահ, գնումների համակարգող		
ՌԻՍԿԵՐ		

Աշակերտ թվի նախատեսվածից քիչ անը
Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը
Ոչ բավարար ֆինանսական միջոցներ
ՌԻՍԿԵՐԸ ՉԵԶՈՔԱՑՆՈՂ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ
Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար
Համագործակցություն համայնքի հիմնական դպրոցների հետ՝ որպես ընդունելության խթանման միջոց
Պետական և օրենքով չարգելված լրացուցիչ ֆինանսավորման աղբյուրներից

ՈԼՈՐՏ		
Նյութատեխնիկական բազա		
ՆՊԱՏԱԿ 2	ԽՆԴԻՐՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Հարստացնել, արդիականացնել նյութատեխնիկական բազան՝ նպաստելով կրթության որակի բարելավմանը	Նյութատեխնիկական բազայի համալրում նոր , ժամանակակից սարքավորումներով, համակարգչային տեխնիկայով:	2026-2028
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Դասասենյակների համալրում նոր գույքով		
Համակարգչային լսարանի կահավորում		
Համակարգչային տեխնիկայի, էլեկտրոնային գրատախտակների համալրում նոր սերնդի տեխնիկայով		
Դպրոցի հանդիսությունների դահլիճի կահավորում		

Կահավորել աշակերտական խորհրդի սենյակը		
Կահավորել ժամանակակից գրադարան /նաև առցանց/ և ընթերցասրահ		
Գրադարանին և ընթերցասրահին կից ստեղծել համակարգիչներով կահավորված լսարան, որտեղ տեղադրված համակարգիչներից դասերից հետո կօգտվեն բոլոր ուսուցիչներն ու աշակերտները, որոնք տանը չունեն համակարգչով աշխատելու հնարավորություն:		
ՌԻՍԿԵՐ		
Աշակերտ թվի նախատեսվածից քիչ անը		
Արտաբյուջետային միջոցների չձևավորվելը		
Ոչ բավարար ֆինանսական միջոցներ		
ՌԻՍԿԵՐԸ ԶԵՉՈՒԹԱՑՆՈՂ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		
Դպրոցի առօրյայի, ձեռքբերումների, սովորողների հանգստի ու ժամանցի լուսաբանումը դպրոցի կայքէջերում և դպրոցի թափանցիկ գործունեությունը՝ որպես ընդունելության խթանման միջոց		
Համագործակցություն համայնքի հիմնական դպրոցների հետ՝ որպես ընդունելության խթանման միջոց		
Տանել հետևողական աշխատանք արտաբյուջետային միջոցները ձևավորող ծրագրերը իրականացնելու համար		
ՈԼՈՐՏ		
Նյութատեխնիկական բազա		
ՆՊԱՏԱԿ 3	ԻՆԴԻՐՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Էլեկտրոնային գրադարանի ստեղծում	Համագործակցային աշխատանք	Յուրաքանչյուր ուս.տարի
	Ուսուցիչ-օպերատոր-գրադարանավար	
	Մեթոդական միավորման նախագահ-օպերատոր	
	մանկավարժական համակազմի ՏՀՏ ունակությունների զարգացում	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
1	Կազմակերպել քննարկումներ ՏՀՏ ունակությունների վերաբերյալ մանկավարժական համակազմի հետ:
2	Կազմակերպել սեմինար ՏՀՏ-ի հետ կապված խնդիր ունեցող ուսուցիչների հետ:
3	Փորձառու, երիտասարդ ուսուցիչների կողմից փորձի փոխանակման կազմակերպում՝ ՏՀՏ գործիքների կիրառման թեմայով:
4	Ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ օպերատոր գրադարանավար փորձառու ուսուցիչ մեթոդական միավորի նախագահ
5	Կատարել վերլուծություն՝ հանձնաժողովով դուրս հանել ուժեղ և թույլ կողմերը
6	Կատարել աշխատանքի բաժանում
7	Կազմակերպել սեմինար վերջնարդյունքների ճիշտ ձևակերպման թեմայով:
8	Ստեղծել գնահատման ռուբրիկ:
9	Սահմանել ժամանակացույց և կատարել վերահսկողություն ըստ կատարած աշխատանքների:
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ	
Տնօրեն, տնօրենի տեղակալ, մեթոդական միավորման նախագահ	
ՌԻՍԿԵՐ	
Ուսուցիչների պասիվություն	
ՌԻՍԿԵՐԸ ՉԵՉՈՔԱՅՆՈՂ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	
Նպաստել ուսուցիչների մասնակցայնությանը, վերապատրաստումներին, ատեստացիաներին, ինքնակրթությամբ զբաղվելուն և որակավորման բարձագման ուղղությամբ աշխատանքներ տանելուն	
Հեռավար հարթակներից օգտվելու կարողությունների զարգացում	

ՈԼՈՐՏ		
Մանկավարժական համակազմ		
ՆՊԱՏԱԿ 4	ԽՆԴԻՐՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Նոր ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան դասի արդյունավետ պլանավորման հմտությունների և կարողությունների զարգացում	Դասի պլանավորման սեմինարի կազմակերպում	Յուրաքանչյուր ուս.տարի
	Հաղորդակից դարձնել արդի մեթոդների կիրառումը դասապրոցեստում	
	Հասնել վերջնարդյունքների ճիշտ ձևակերպման	
	Ստեղծել դասի պլանավորման գնահատման ռուբրիկներ	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Մեթոդական միավորների շրջանակում,կազմակերպել սեմինարներ, դասի պլանավորման ձևերի և պահանջների վերաբերյալ` նոր ՀՊՉ -ի պահանջներին համապատասխան:		
Փորձառու ուսուցիչների կողմից փորձի փոխանակման կազմակերպում մեթոդների կիրառման թեմայով:		
Կազմակերպել վերապատրաստումներ,դասի պլանավորման հետ խնդիր ունեցող ուսուցիչների հետ:		
Կազմակերպել սեմինարներ, վերջնարդյունքների ճիշտ ձևակերպման թեմայով		
Կազմակերպել վերապատրաստում, գնահատման ռուբրիկներ թեմայով:		
Կազմել դասալսումների ժամանակացույց և հանձնաժողով:		
Կատարի դասալսումներ փորձառու ուսուցիչների հետ:		
Հանձնաժողովով ներկայացնել դասալսումների վերլուծություն,դուրս հանել թույլ և ուժեղ կողմերը:		
Հաշվի առնելով վերլուծության արդյունքները`ըստ կարիքների կազմակերպել սեմինարներ,քննարկումներ,վերապատրաստումներ:		
Ձեռնարկված միջոցառումների արդյունքներով նոր դասերի պլանավորում:		

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ
Տնօրեն, տնօրենի ուսումնական գծով տեղակալ, մեթոդական միավորների նախագահներ

ՈԼՈՐՏ		
Աշակերտական համակազմ		
ՆՊԱՏԱԿ 5	ԽՆԴԻՐՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
Կոմպետենտ (կարողունակ) քաղաքացիների ձևավորում	Սովորողների մոտիվացիայի խթանում	2024-2028
	Ուսումնառության որակի բարելավում	
	Աշակերտական ինքնավարության խթանում	
	Արժեհամակարգի ձևավորում	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում		
Մշտադիտարկումներ, կրթական կարիքի գնահատում և սովորողների ուսուցման անհատական մոտեցումների կիրառում դասապրոցեսում		
Աշակերտական խորհրդի սենյակի ձևավորում աջակցություն աշակերտական խորհրդի նախաձեռնություններին		
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐ		
Տնօրենություն, տնօրենի տեղակալ, մեթոդմիավորման Նախագահներ, մանկավարժական համակազմ		
ՌԻՍԿԵՐ		
Սակավաթիվ աշակերտներ, հեռավար հարթակներից օգտվելու հմտություններ և հնարավորություններ		
ՌԻՍԿԵՐԸ ՀԵԶՈՔԱՑՆՈՂ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		

ՈԼՈՐՏ		
Ուսումնական միջավայր		
ՆՊԱՏԱԿ 6	ԽՆԴԻՐՆԵՐ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
